



ՆՈՐ ՍԵՐՈՆԵՂ Մարդասիրական ՀԿ

ԽԹԱՆԵԼ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ,
ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ, ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ,
ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ՝
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՇԱՀԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ



<http://ngngo.net>



New Generation
Humanitarian NGO



[ngngo.armenia](https://www.instagram.com/ngngo.armenia)



[@NGNGOArmenia](https://twitter.com/NGNGOArmenia)

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (ՆՍՀԿ) ոչ առևտրային հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1998թ.-ին՝ նպաստելու հասարակության մարդկանց իրավունքների և շահերի պաշտպանությանը, տրամադրելու նյութական և ոչ նյութական աջակցություն ֆիզիկական և իրավաբանական անձանց և իրականացնելու հասարակական տարբեր արդյունավետ նախաձեռնություններ, այդ թվում՝ աջակցել Եվրոպայում անվտանգության և համագործակցության գծով Հելսինկյան համաձայնագրի 1975թ-ի եզրափակիչ ակտի և ՄԱԿ-ի կողմից 1948թ-ին ընդունված Մարդու իրավունքների Համընդհանուր Հռչակագրի, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի, Մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի, տնտեսական սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի իրականացմանը և դրանց շրջանակներում ընդունված միջազգային համաձայնագրերի, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության կողմից այլ միջազգային իրավական ակտերով ստանձնած պարտավորությունների կատարմանը: Կազմակերպությունն ունի հստակ կառուցվածք, գործողությունների շրջանակ և ռազմավարություն: Իր գործունեության ընթացքում ՆՍՀԿ-ն իրականացրել է բազմաթիվ ծրագրեր: Այն հանրապետության ամենակտիվ կազմակերպություններից է ոչ միայն իրականացրած տարբեր ծրագրերի, այլև իր ծրագրերում ամբողջ Հայաստանն ընդգրկելու կարողության շնորհիվ: Այն ունի բանիմաց աշխատակազմ, տեխնիկապես հագեցած է, գրասենյակը գործում է Երևան քաղաքում:



ՏԵՍԼԱԿԱՆԸ

Խտրականության բացառման, իրավունքի գերակայության, հավասարության և արդարության սկզբունքներով առաջնորդվող հասարակություն



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ԵՆ՝

- Օրինապահություն
- Թափանցիկություն և հրապարակայնություն
- Կամավոր անդամակցություն
- Հավասարություն
- Ինքնակառավարում և առաջնորդության կոլեգիալություն (կառավարում)

ԱՐԺԵՔՆԵՐԸ

- Հավասարություն
- Արդարություն
- Հանդուրժողականություն
- Արժանապատվություն
- Իրավունքի գերակայություն
- Խոսքի ազատություն
- Մարդասիրություն
- Խաղաղասիրություն
- Բազմազանություն
- Գենդերային հավասարություն
- Խտրականության բացառում

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Մարդու իրավունքների և շահերի պաշտպանություն
- Առողջության պահպանման մատչելիություն և հասանելիություն
- Շահառու համայնքների և նրանց հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների և ոչ ֆորմալ խմբերի հզորացում
- Սոցիալական աջակցություն
- ՆԱՀԿ հզորացում

ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

- ԼԳԲՏԻ անձինք, SUS-եր (տղամարդկանց հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդիկ) և ԿՍԿ-եր (կանանց հետ սեռական հարաբերություններ ունեցող կանայք)
- ԹՆՕ (թմրամիջոցների ներարկային օգտագործողներ)
- Սեռական ծառայություն մատուցող անձինք
- ՄԻԱՎ-ով և ՏԲ-ով ապրող մարդիկ
- Փախստականներ, միգրանտներ
- Դատապարտյալներ և կալանավորներ
- Երիտասարդներ



Memorandum of understanding

The two organizations

- "New Generation" Humanitarian NGO (NGNGO; Yerevan, Armenia), represented by president Sergey Gabrielyan
- Bavarian Youth Council (BJR; Bavaria, Germany), represented by president Matthias Fack

met from July 22-27, 2018 in Yerevan as part of delegation program to discuss their strategy for a future cooperation. Both sides confirm, that they enrich each other by sharing their experiences and competences to build up a strong and sustainable youth policy as well as structures that allow youngsters to take part in educational valuable youth exchanges with meaningful contents.

Therefore, the organizations declare their intent to sign a memorandum of understanding during the General Assembly of the BJR from October 19-21, 2018 in Gauting (Bavaria) with the following contents:

- a strategic partnership, especially to apply for further fundings to improve and extend their programs,
- focus on intercultural exchange to promote peace and understanding – creating the basis for open-minded, compassionate interaction,
- develop common projects, e. g. on human rights and democracy

Therefore, BJR invites three representatives of NGNGO to its General Assembly in October.


ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՄԲԵՐ

- Ֆիզիկական անձիք և ոչ ֆորմալ խմբեր
- Իրավաբանական անձիք
- ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ
- Դիվանագիտական կառույցներ և միջազգային կազմակերպություններ
- ՉԼՄ-ներ (զանգվածային լրատվական միջոցներ)



ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

- Դասընթացների և սեմինարների կազմակերպում
- Խորհրդատվություն
- Հանրային և սոցիալական միջոցառումներ
- Կարողությունների զարգացման և հզորացման ծրագրերի անմիջական և ոչ անմիջական իրականացում
- Շահերի պաշտպանություն
- Դատարաններում և համապատասխան մարմիններում ներկայացուցչության ապահովում և ռազմավարական դատավարություն
- Մշտադիտարկում և գնահատման գործողություններ
- Փորձի փոխանակման ծրագրեր
- Դրամաշնորհային / ենթադրամաշնորհային ծրագրերի իրականացում և տրամադրում անհատներին, ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերին
- Մարդասիրական և բարեգործական ծրագրերի իրականացում
- Ժամանակավոր կացարանների տրամադրում
- Մրցանակաբաշխությունների և շնորհանդեսների կազմակերպում



Երևան, Հայաստան
2018թ.



+374(0)60378989
+374(0)60478989